(1286 — 1289) որ Հեթում թագաւորի կողմէ աթոռընկէց ըլլալով չղթայակապ բանտարկուեցաւ Լամբրոնի մէջ եւ յետոյ առաջնորդ եղաւ Սկևռայի, եւ կամ՝ Կոստանդին Դ. կթղ. Լամբրոնացին ըլլայ թերևս, որ Սկևռայի վանքին մօտիկ Լամբրոնի բերդէն էր (1323—1326)։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԹՂ. ԲԱՐՁՐԲԵՐԴՑԻ. (1221—1267). Հայրը՝ Վահրամ, մայրը՝ Շողիկ, եղբայրները՝ Գրիգոր և Գեորգ, եղբօրորդին՝ Թորոս fli. և անոր որդին՝ Ստեփանինս (Թորոս Աղքար, Բ. էջ 359)։ 1238ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. «Կոստանդին կաթողիկոս ընդ կաթողիկոսին Ասորւոց երթայ յերուսաղէմ յուխտ.» (Սիսուան, էջ 554)։

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԹՂ. ՎԱՀԿԱՑԻ.— (1430 — 1439). ՄՁ. Թ. 251 ձեռագիրը նկարագրդ մագաղաթեայ Աւետարան մ'է՝ որուն առաջին յիշատակարանէն կը հասկցուի թէ՝ նոյն ձեռագիրը 1260ին կ'ընդօրինակուի Հռոմկլայի մէջ Կոստանդին կթղ. Բարձրբերդցիի համար. նկարչութեամբ նշանաւոր Թորոս Ռոսլինի։ Այս թանկագին ձեռագիրը ժամանակ յետոյ գրաւ կը դրուի ասորի Խոճա Ասիլէտտին անուն մէկուն մօտ. Վահկացին՝ դեռ եպս. փափաքող կ'ըլլայ ձեռագիր մը ունենալու. կ'իմանայ որ՝ յիշեալ ձեռագիրը գրաւ կը մնայ նոյն ասորիին մօտ. ամէն ջանք կը թափէ եւ ԽՁ ֆլորիի կը գնէ ու կ'ստանայ և ոսկեզօծել ու արծաթել կուտայ զայն։ Պատմական տեսակէտով ձեռագրիս բոլոր յիշատակարանները կարևոր են. մենք կը քաղենք անոնցմէ միայն այն մասերը՝ որ կապ ունին մեր նիւթին հետ. Վահկացին իր մասին կը գրէ «.... յիշեցէք ի սբ և ի մաքրափայլ յաղաւթս ձեր զտէր Կոստանտինս. և ըզծնաւղս իմ. զՎասիլ և զմայրն իմ զՏիրուհի, եւ զԱյ. աւրինաւք զամուսին իմ զՄարիուն. եւ զածսուր որդեակն իմ զակոբ. Ժ. ամեայ փոխեցաւ ի Քս. և ինձ մեծ սուգ և տրտմութիւն եղև. որ այլ չունիմ ինձ մխիթար յաշխարհս. բայց միայն զՔս. որ մխիթարիչ է հոգւոց և մարմնոց կենդանեաց և ննջեցելոց։ ... Արծաթապատ զարդարեցաւ ի մեծ թվին Հայոց ՊԿԲ (= 1413) և ի Հայր. տն. տր. յակոբայ. կթղկսի. ընդհանուր ամ. հայկազեան սեռի. և ի նորա աթոռակալութեան տր. վահրամին ...»։ Այս յիշատակարանը գրած է Աստուածատուր երէց։ Կոստան-